**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

# Հ Ր Ա Մ Ա Ն

«27» «փետրվարի» 2023 թ. № 66-Ա

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 330-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետով և 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 10-ի N 1638-Ն որոշման 4-րդ կետը և վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1" Շրջակա միջավայրի նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 23-ի «Հայաստանի բնության պետական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 22-ի N 460-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 330-Ա հրամանի հավելվածում՝

1) 16-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր թ.1)-րդ ենթակետով՝

«թ"1) կազմակերպության հաստիքային ցուցակի հաստատումը.»:

2" Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Հայաստանի բնության պետական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի 1-ին կետով նախատեսված լրացման պետական գրանցումը:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

2/27/2023

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«27» «փետրվարի» 2023թ.
ք. Երևան

Կազմված է «21» 02 2023թ.
Բաղկացած է 1 էջից

Տպագրված է ընդամենը 3 օրինակ
ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
Շրջակա միջավայրի նախարարի
2023թ. փետրվարի 22-ի N66-Ա հրամանի
Հ. Սիմիդյան
«27» փետրվարի 2023թ

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԿՈՂՄԻՑ 21 03 2003թ
գրանցման համար՝ 286.210.04531
ՀՎՀՀ՝ 02519651
06.10.2022թ. գրանցված կանոնադրության
թիվ 001-3 լրացումը գրանցված է
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից
«07» 03 2023թ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՈՒՆ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

## (ԼՐԱՑՈՒՄ)

Շրջակա միջավայրի նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 23-ի «Հայաստանի բնության պետական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 22-ի N 460-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 330-Ա հրամանի հավելվածում 16-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ թ.1)-րդ ենթակետով.

«թ.1) կազմակերպության հաստիքային ցուցակի հաստատումը.»:

Ք. ԵՐԵՎԱՆ
2023Թ.